ՄԻԿՐՈԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՇՈՒՐՋ

(գիտամեթոդական տեսանկյունից)

ԹՈՐՈՍՅԱՆ Կ. Ա., ԴԻԼՈՅԱՆ Ս.Ա.

Միկրոէկոնոմիկայի ծագումը, յուրահատկությունը և կառուցվածքը հայտնություններ չեն. դրանք հայտնի էին նաև Հին աշխարհին: Ասիայի մի շարք երկրներում նահապետական տնային տնտեսությունը և թեթև մանուֆակտուրային արտադրությունը գոյություն են ունեցել մեր թվարկությունից առաջ. պեղումները նորանոր տեղեկություններ են հաղորդում այդ մասին: Չնայած դրան՝ ընդունված է այն կարծիքը, որ միկրոէկոնոմիկան ձևավորվել է Եվրոպայում XV-XVI դդ., երբ կապիտալիստական մասնավոր սեփականության հաստատումով դրվեցին քաղաքացիական հասարակության կազմավորման միջոցով ճորտատիրության վերացման, անհատական տնտեսության և փոքր ձեռնարկատիրությունների ստեղծման հիմքերը: Այս տեսակետից առանձնահատուկ ուշադրության է արժանի երբեմնի ԽՍՀՄ-ի կազմում ընդգրկված պետությունների, առավել ևս՝ ներկայիս Ռուսաստանի Դաշնության բնութագիրը: Թեև Ռուսաստանում ճորտատիրական իրավունքը 1861 թ. համարվեց վերացած, կալվածատիրական հողատիրությունը շարունակեց գոյություն ունենալ ընդհուպ մինչև 1917 թ. հոկտեմբերի 9-ը՝ հողի մասին դեկրետի հրապարակումը: Իսկ 1920 թ. վերջերից սկսվեց «կարմիր գվարդիականների գրոհը»՝ ուղղված մասնավոր սեփականության վերացմանը՝ հանուն միայն հանրային սեփականության բռնի հաստատման:

Նման պայմաններում միկրոէկոնոմիկան, որն իր էությամբ ազգային տնտեսության՝ որպես ամբողջական մարմնի մակրո և մեգամակարդակները սնուցող մազանոթների դեր է կատարում, ոչնչացվեց: Ժողովրդի մի շարք անմիջական պահանջները բավարարող այդ համակարգը հնարավոր եղավ լիարժեքորեն կյանքի կոչել 1992 թ.՝ պրիվատիզացիայի (privatus)՝ մասնավոր սեփականության հաստատման և հանրային սեփականության ինտենսիվորեն վերացման միջոցով: Երևույթ, որը ոչ թե բացարձակ, այլ հարաբերականորեն օբյեկտիվ անհրաժեշտություն էր[1]:

Միկրոէկոնոմիկայի աշխուժացումը, տարածումը և ընդլայնումը, որպես մարդկանց ստվար զանգվածների զբաղվածության ապահովման և նրանց հանապազօրյա պահանջները բավարարող տնտեսավարման ձև, առավել կարևոր են զարգացող երկրների համար: Կա-

---

[1] *Որքան էլ զարմանալի է, մասնավոր սեփականությունը, որը մարքսիստական քաղաքատնտեսությունը համարում է պատմական «չարիք», անխուսափելի անհրաժեշտություն է: Չնայած նման անհրաժեշտությունն այսօր դիտվում է իբրև սեփականության այդ ձևի բացարձակ գերակայության ձգտում, որը նույնպես վտանգավոր ծայրահեղություն է, քանզի այն արդեն տանում է հասարակության միաբևեռ (հոմոգեն) կազմության, որը կխթանի հեղափոխական ցնցումները:*

րելի է պատկերացնել, թե ինչ կլիներ կոմունիստական Չինաստանի վիճակը, եթե XX դ. 60-ական թթ. վերջին այդ երկիրը միկրոէկոնոմիկայի զարգացման փոխարեն շարունակեր համատարած հանրայնացումը՝ հօգուտ մակրոէկոնոմիկայի:

Միկրոէկոնոմիկայի կենսունակությունը և կարևորությունը կարելի է բացատրել ոչ միայն Չինաստանի օրինակով: Արևմտյան բոլոր երկրների, առավել ևս ԱՄՆ-ի տնտեսական զարգացման, քաղաքական կործանարար հեղափոխական շարժումների կանխման գործում տնտեսավարման այդ մակարդակը դրական իմաստով ունեցել է իր ուրույն բաժինը: Մի բան, որը ԽՄԿԿ-ն մինչև վերջ կանխակալորեն անտեսեց:

Հասկանալի է, որ առավել ևս արդի պայմաններում միկրոէկոնոմիկայի մակարդակով անհնար է երկրի պաշտպանությունն ապահովել, երկաթուղիներ, ատոմակայաններ, ջրանցքներ կառուցել, մի խոսքով՝ զարգացնել հասարակական արտադրության առաջին ստորաբաժանումը՝ արտադրության միջոցների արտադրությունը: Բայց նաև պետք է նկատի ունենալ, որ առանց ազգային տնտեսության միկրոմակարդակի կենսագործունեության, հնարավոր չէ մարդկանց պահանջները լիարժեք բավարարել: Այն ընդգրկում է առաջին հերթին ամբողջ ազգային տնտեսության սկզբնական օղակների գործունեությունը, կենցաղային սպասարկումը, մանր ձեռնարկատիրությունները և տնային տնտեսությունը, բանջարանոցային մշակությունները, անասնապահությունը, վայրի, ուտելի բուսականության, մրգերի և դեղաբույսերի հավաքումն ու վաճառքը և այլն:

Միկրոէկոնոմիկան ուսումնասիրում է նաև շուկայական հարաբերությունները բնութագրող գծերը, արժեզրկման, մրցակցության, մոնոպոլիստական միավորումների, նոր արժեքի, շահույթի, տոկոսի, առևտրական, փոխատվական կապիտալի, աշխատավարձի, ռենտային հարաբերությունների և այլ տնտեսական կատեգորիաների հետ առնչվող խնդիրները:

Ազգային տնտեսության կառուցվածքի ենթաշերտերի առանձնահատկություններն առաջին հերթին պայմանավորված են ելակետային տնտեսական հարաբերությունների ընտրության տարբեր մեթոդաբանական մոտեցումներով: Տնտեսագիտության տեսության, առավել ևս նույնատիպ, ամբողջական տրամաբանությունն աղճատող գծագրերով ու գրաֆիկներով հագեցած «էկոնոմիքսի» համար ելակետային են շուկայական հարաբերությունները, իսկ քաղաքատնտեսության[2] համար՝ արտադրականը:

---

[2] *Անհրաժեշտ է վերստին նշել, որ խորհրդային սոցիալիզմ կոչվող խիստ քաղաքականացված կայսրության փլուզումից հետո «քաղաքատնտեսություն» առարկայի մասնագետների մի ստվար բանակ այնպես անմռունչ հրաժարվեց այդ անվանումից, որ կարծես թե այն կոմունիստական դասակարգերի մասնավոր հայտնագործությունն ու միայն խորհրդային սոցիալիզմի անբաժանելի մասն էր: Եվ դա այն պայմաններում, երբ տնտեսական շահերի և հարաբերությունների ամբողջ համակարգն առավել քաղաքականացվեց:*

Նշված մեթոդաբանական մոտեցումներն ունեն որոշ տարբերություններ, սակայն ամբողջության մեջ դրանք նման են մարդկանց լայն պահանջները բավարարող այնպիսի «գետի», որը, ինչ խոսք, բաղկացած է սնող աղբյուրներից (միկրոմակարդակ՝ արտադրություն, աշխատանքի տեսակ), վտակներից (մեդիում մակարդակ՝ տընտեսության ճյուղեր), ավազանից (մակրոմակարդակ՝ տնտեսության սեկտոր) և համաշխարհային օվկիանոսի հետ կապող գետաբերանից (մեգամակարդակ՝ տնտեսության ոլորտ):

Ցավոք, մարդն այսօր՝ հանրային սեփականության և բարիքների ֆոնդային (ոչ թե շուկայական) բաշխման պայմաններում, ինքնակառավարման ընդունակություն չունենալու պատճառով նախապատվությունը տալիս է մասնավոր սեփականությանը և փոխանակային հարաբերություններին, որոնցով էլ թելադրվում է այն, որ տնտեսագիտությունն իր ուսումնասիրությունն սկսում է միկրոենթաշերտ համարվող շուկայից: Մինչդեռ սպառման շահերը օբյեկտիվորեն թելադրում են նախ արտադրել և ապա արտադրված ապրանքներն ու ծառայություններն իրացնել:

Շուկայական հարաբերությունների առաջնայնությանն անվերապահորեն տուրք տալը հասցնում է նրան, որ տեղի է ունենում բնություն կոչվող համընդհանուր կերակրողի շահերի լլկում, որի պատճառով այն այսօր արձագանքում է խոշորագույն աղետներով, իսկ վաղը նման ձևով շարունակելու դեպքում կսպառնա գլոբալ կործանումներով:

Բուսակենդանական աշխարհի առջև ծառանում է ճակատագրական մի հիմնախնդիր, որի համար որոշիչ է ոչ թե տնտեսագիտության ենթաշերտային կառուցվածքի տեսական ուսումնասիրությունը, այլ այն ելակետային հարաբերությունների ընտրությունը, որն առավել կապված է բնության, ուրեմն և մարդկության լինել-չլինելու հետ: Անկասկած, այդ դերը մենաշնորհի կարգով պատկանում է ոչ թե շուկային, այլ արտադրությանը, որն իր ամբողջության մեջ մակրոտնտեսական կատեգորիա է: Ինչպես նկատվում է, հարցի պատմամեթոդաբանական կողմը պահանջում է ուշադրություն դարձնել մինչշուկայական և ազատ շուկայի ձևավորման վրա:

Մասնավոր սեփականության և ապրանքային հարաբերությունների՝ դարերի ընթացքում տեղի ունեցած որակական փոփոխություններից նկատվում է, որ հասարակության զարգացմանը հատուկ են երկու խոշորագույն փուլեր՝ մինչշուկայական, որը համարվում է անցած փուլ, և շուկայական, որում ներկայումս ապրում են մարդիկ:

Մինչշուկայական (նախաշուկայական) տնտեսությունը գործել է իր յուրահատուկ օրենքներով և կանոնակարգով, դրանց համապատասխան իրավունքով և օրենքներով, նաև բարոյական ըմբռնումներով: Սակայն մինչև շուկայական հարաբերություններին անցնելը տնտեսության զարգացումը երկար ժամանակ էր պահանջելու, հատկապես ապրանքային տնտեսության հաստատման համար:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ամեն մի շուկա ենթադրում է արտադրանքի (բարիքների) առուծախ, որը տնտեսագիտությունը

դիտում է որպես ապրանքների փոխանակման միջոցով շարունակ կրկնվող գործընթաց: Ըստ էության, դա է «շուկա» տնտեսական կատեգորիայի իմաստը՝ իր բոլոր բարդույթներով: Կարևոր է նկատի ունենալ, որ բարիքների օտարումը և փոխանակումը եղել են նաև, երբ դրանք ապրանքային բնույթ չեն կրել: Անգամ երբ ուշ մինչշուկայական պայմաններում դրանք տեղ-տեղ ընդունել են ապրանքային տեսք, դեռևս չէր նշանակում, թե այդ ժամանակ շուկայական հարաբերությունները գոյություն ունեին:

Շուկային հատուկ են առաջին հերթին «գնում եմ, որ վաճառեմ», «վաճառում եմ, որ գնեմ» սկզբունքները, այնուհետև «գնում եմ, որ սպառեմ» նպատակադրումը: Այստեղ առկա է արժեքի օրենքի, գների մի ամբողջ համակարգի և այլ բաղկացուցիչների գործունեությունը, որը գոյություն չուներ զարգացման մինչշուկայական պայմաններում: Այդ ժամանակ «մարդ-բնություն», «մարդ-մարդ» փոխհարաբերությունների կարգավորիչներն էին բարոյական նորմերը, դրանցով «շաղախված» չգրված օրենքները: Հետագայում բնօգտագործմամբ պայմանավորված աշխատանքը (արտադրությունը), որպես մարդկանց նպատակասլաց գործունեություն, ընդլայնվելով նպաստեց մարդկանց միջև փոխօգնության և փոխանակային հարաբերությունների զարգացմանը՝ հօգուտ շուկայի կազմավորման: Վաղ ընտանեկան, տոհմական մեկուսացումը փլուզվում է, և սկիզբ է դրվում սոցիալ-տնտեսական, ռազմական և այլ բնագավառների առաջնորդների ընտրության՝ հասարակական, հետագայում նաև քաղաքական ինստիտուտների տեսքով, որը լրջորեն նպաստեց մասնավոր սեփականության առաջացմանը, ամրացմանը և զարգացմանը, շուկայի՝ որպես տարատեսակ ապրանքների իրացման կատարյալ ձևի կազմավորմանը:

Կարելի է համաձայնել այն կարծիքներին[3], որ 10-15 հազար տարի առաջ, ինչ խոսք, տնտեսություն կար, բայց շուկա դեռ չկար, այնպես ինչպես աշխատանքը եղել է այն դեպքում, երբ արտադրություն չի եղել: «Աշխատանք», «արտադրություն», «փոխանակում՝ շուկա» և այլ համընդհանուր տնտեսական կատեգորիաներն ընդ-հանրապես առաջացել են հազարամյակների ընթացքում՝ հաջորդականության սկզբունքով, և անհնար է դրանց ծագման որևէ որոշակի թվական նշել:

Քաղաքակրթության առաջին մակարդակում բարիքները բնությունից վերցվել և ուղղակի օգտագործվել են, երկրորդում դրանք վերցվել և օգտագործվել են մշակելուց հետո, երրորդում վերցվել, մշակվել, բաշխվել, փոխանակման միջոցով յուրացվել և օգտագործվել են: Փոխանակումը, որ սկսվել է պարզ, եզակի, պատահական ձևով, հետագայում կարգավորվելով՝ ընդունել է շուկայական ձև:

Այս բոլորը նկատելի են դարձնում տնտեսական (արտադրական) հարաբերությունների օղակների ժամանակագրական (ծագումնաբանական) պատճառահետևանքային կապերը և դրանց զբաղեցրած

---

[3] **Бродель Ф.** *Материальная цивилизация: экономика и капитализм, в 3-х т., т. 2, М., 1986, с. 5.*

տեղերը հարաբերությունների համակարգում: Ելնելով շուկայի և սպառման պահանջների բավարարման (կենսամիջոցների օգտագործման) փոխպայմանավորվածությունից և փոխկապակցվածությունից՝ հարկ է նշել, որ մինչշուկայական տնտեսությունը քրեական տարրեր չի պարունակել, մինչդեռ շուկայական տնտեսությունը հագեցած է դրանց տարատեսակներով: Այս առումով պետք է համաձայնվել տնտեսագիտության տեսության և շուկայագիտության դասագրքերի այն հեղինակների հետ, որոնք ուշադրություն են դարձնում նաև ստվերային և քրեորեն հետապնդվող տնտեսական գործարքներին՝ դրանցից ազատվելու նպատակով: Նման գործարքների շարքին են դասվում գների, բազմաթիվ պայմանագրերի, սահմանված մաքսային կանոնակարգի շահադիտական խախտումները, տարադրամի կամայական փոփոխման հետ կապվող չարաշահումները, արտադրանքի ծավալի, դրանից ստացված շահույթի չափը թաքցնելը, աշխատուժի ընդհատակյա օգտագործումն ու շահագործումը և այլն:

Շուկայական տնտեսությունը, իր անխուսափելի շեղումներով հանդերձ, հաջորդում է ոչ թե բնատնտեսությանը, ինչպես կարծում են մի շարք տնտեսագետներ, այլ ավանդական տնտեսությանը: Բնատնտեսությունը եղել է, կա ու կլինի, առավել ևս գյուղատնտեսական արտադրության հատվածում: Այսօր աշխարհի բնակչության ավելի քան 40 %-ն ապրում է բնատնտեսության պայմաններում: Ինչ վերաբերում է ավանդական տնտեսությանը, ապա այն համարյա ամբողջովին տեղը զիջել է օրինաչափորեն ձևափոխված շուկայական և պլանաչափ սկզբունքներով գործող տնտեսություններին:

Հասարակության գոյության և զարգացման մինչշուկայական տնտեսության երկարատև ժամանակաշրջանի հանգամանալից ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է առնը-վազն երկու խոշոր օրինաչափություններով՝

ա) այն համարվում է քաղաքակրթության «հումանիզացման» և շուկայական «ապրանքային տնտեսության» ձևավորման երկարատև նախաշրջան.

բ) առանց դրա մանրակրկիտ ուսումնասիրման՝ անհնար է ընկալել, մտահանգել, եզրակացնել, ճանաչել, բացահայտել այն տնտեսական կատեգորիաների, օրենքների և օրինաչափությունների ներքին գործառութային կապերը, որոնց թվին է դասվում նաև դարերի ընթացքում ձևավորված շուկան, որը հիմք է բարիքների փոխանակման հարաբերությունների ազատ շուկայի ձևավորման համար:

Այստեղ կարևոր է ընկալել, թե ինչպես է աշխատանքի արդյունքն ընդունում դժվարաճանաչ ապրանքային ձև, որի պատճառով փոխանակման պահին սպառման համար անհրաժեշտ բարիքի որակական հատկանիշն անցնում է երկրորդ պլան, քանակականը՝ առաջին: Այն էլ այն պարագայում, երբ բարիքների միայն երկրորդ պլան անցնող հատկությունն է ընդունակ բավարարելու մարդկանց՝ շղթայական ռեակցիայի սկզբունքով գործող և անշեղ աճող պահանջները, որն էլ «ապրանքային արտադրություն», «փոխանա-

կում», «ապրանք», «շուկա», «փող» և այլ տնտեսական կատեգորիաների առաջացման պատճառ է դարձել:

Կարծեցյալ շատ պարզ, ընկալելի շուկան պահանջում է իրականացնել ապրանքային, ապրանքափողային, բարտերային, վարկային, բանկային, լիզինգային և այլ տնտեսական գործառնություններ: Այդ սուբյեկտիվ ցանկություններով շաղախված օբյեկտիվ գործառույթների էությունը, փոխադարձ կապերը հասկանալու և կառավարելու համար նախ պետք է տալ ապրանքաշրջանառության բնութագիրը, որով պայմանավորված է շուկայի գոյությունը: Նման շրջանառությունը ենթադրում է՝

ա) ապրանքների միջոցով դրանց տերերի տնտեսական շահերի դեմառդեմ հանդիպում.

բ) նույնարժեք տարբեր որակի ապրանքների փոխանակում, որի դեպքում մինչշուկայական տնտեսությանը հատուկ փոխադարձ նվիրատվությունն անհամատեղելի է.

գ) գների սանդղակի ձևավորում, որը գործում է արժեքի օրենքի առաձգական շեղման սկզբունքով.

դ) վաճառքից առաջ ապրանքի ստացում, որը տեղի է ունենում ոչ միայն առարկայական տեսքով.

ե) ապրանքային արտադրությանը և շրջանառությանը հատուկ բոլոր գործարքների կանոնակարգված իրականացում.

զ) փողային և բարտերային փոխանակության զուգահեռ գործողություն.

է) ապրանքաշրջանառության կանոնակարգում՝ ո՞ւր, որտե՞ղ, ո՞ւմ, որքա՞ն հարցերի շրջանակով, և որոնց պատասխանը տրվում է բիզնես պլանի միջոցով.

ը) շուկայական հարաբերությունների ձևավորմանը և զարգացմանը զուգահեռ՝ ապրանքային, ապա ապրանքափողային ֆետիշիզմի (գերագնահատման) անխուսափելի ծագում և արմատավորում:

Քանի որ շուկան գործնականում ապրանքաշրջանառության կատարյալ և կենտրոնացված գործընթաց է, ապա թվարկած հատկանիշները ըստ էության վերաբերում են շուկային և շուկայագիտությանն ընդհանրապես: Շուկա, որն ուսումնասիրելիս պետք է ելնել էկոնոմիկայի այն որակական ձևափոխություններից, որոնք տեղի են ունեցել հազարամյակների ընթացքում՝ հօգուտ փոխանակային հարաբերությունների ամրացման և զարգացման:

Շուկան ենթադրում է որոշակի ժամանակում վաճառողների և գնորդների հաղորդակցում, տեղ, տարածք, որտեղ հանդիպում են նման ձևով հաղորդակցվողները: Վաճառվող (օտարացվող) ապրանքների տեսականու կենտրոնացման պատճառով վերջինս ունենում է համապատասխան անվանումներ՝ սպառողական, նավթամթերքի, ավտոմեքենաների, աշխատուժի և այլն: Նման շուկաներն ընդունված է անվանել մոնոապրանքային (միապրանքային)՝ ի տարբերություն բիապրանքայինի (երկապրանքային), երբ շուկայում վաճառվում է ընդամենը երկու տեսակի ապրանք: Ազատ շուկային ընդհանրապես հատուկ է բազմաապրանքայնությունը:

Անկախ շուկա ներմուծվող ապրանքների սպառողական յուրահատկություններից և քանակից՝ այն կարող է լինել ազատ, կատարյալ ազատ մրցակցային (պոլիպոլիա), կատարյալ մենաշնորհային (մոնոպոլիա), պլանային և դիրեկտիվ պլանային:

Կատարյալ ազատ մրցակցային շուկան պայմաններ է ստեղծում կատարյալ մենաշնորհային շուկայի ձևավորման համար, որը թեև մի շարք տնտեսագետներ չեն ընդունում, ունի հետևյալ հատկանիշները.

• արտադրության միջոցների մասնավոր սեփականության առկայություն.

• զարգացած ապրանքային արտադրություն, որն իր հերթին ենթադրում է վաճառողների և գնորդների հոծ բազմություն.

• շուկա ներմուծվող ապրանքների ամբողջ ծավալի համեմատությամբ առանձին վերցրած յուրաքանչյուր ապրանքատիրոջ բաժնի պակաս.

• նույնանուն (նույն սպառողական արժեք ունեցող), բայց տարբեր ձեռնարկություններում արտադրված ապրանքների որակի հավասարություն.

• որևէ ապրանքի արտադրության լրիվ ազատություն.

• ապրանքատիրոջ, գնորդի կամ այլ արտաքին ուժի կամայական ազդեցության բացակայություն.

• գործող գների մասին բոլոր վաճառողների հավասար տեղեկատվություն.

• վաճառողների և գնորդների կողմից մեկին ուղղված միավորված դավադրության բացակայություն.

• կատարյալ մրցակցության մասնակիցների՝ եկամուտ ստանալու փոխադարձ համաձայնեցվածություն[4]:

Ժամանակի ընթացքում ձևավորված սույն հատկանիշներն ընկած են այսօրվա շուկայական հարաբերությունների հիմքում, որոնց գերակշռող մասը գործում է աննկատ: Ամեն դեպքում պետք ըմբռնել, որ յուրաքանչյուր կազմակերպված շուկայում ազատ, անկազմակերպ մրցակցության մեխանիզմի դրսևորումը ստեղծում է կարծիք, որ այդ շուկան անկազմակերպ է:

Ազատ շուկան, որին այլ կերպ կարելի է անվանել մրցակցային, անկազմակերպ մրցակցային, ոչ կատարյալ մրցակցային շուկա է, և որն ավելի քան կես հազարամյակ նախորդել է կապիտալի (բիզնեսի) մենաշնորհային շուկային, ունի այնպիսի տնտեսական բնույթ, որի պայմաններում որևէ մեկը չի կարող իր ցանկացած գինը թելադրել մյուսներին՝ գների ենթակարգում կատարել: Նման շուկան իր գործունեությունը սկսել է ապրանքով, դրա տնտեսական կատարելագործումը հանգեցրել է մի կողմից ապրանքափոխանակային հարաբերությունների առաջացմանը, մյուս կողմից՝ ի տարբերություն պոլիպոլիայի, սահմանափակ մենաշնորհային շուկայական հարաբերությունների ձևավորմանն ու հետագա լիարժեք գործողությանը:

---

[4] **Войтов А. Г.** *Экономика. Учебник, 7-е изд., М., 2003, с. 103.*

Այսպիսով, հասարակական արտադրությունն անցել է զարգացման հետևյալ անխուսափելի փուլերը՝ մինչշուկայական, ազատ շուկայական, մենաշնորհ (զուգահեռ՝ դիրեկտիվ պլանային) շուկայական (այժմ՝ հետարդյունաբերական-տեղեկատվական զարգացման շուկայական փուլում), երբ գնվում ու վաճառվում է նաև այն, ինչն անհնար է ապրանք համարել:

Շուկայական հարաբերությունների մասին խոսելիս և ուսումնասիրելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանք տարբեր երկրներում նախ դրսևորվում են իրենց յուրահատկություններով և ապա անմիջական կամ միջնորդավորված ձևով կապված են տնտեսական բոլոր օրենքներին ու կատեգորիաներին, ամբողջ արտադրությանը և սպառման համակարգին:

Շուկան, իբրև օբյեկտիվ անհրաժեշտություն, գործում է տարատեսակ փոխանակային միջոցների օգնությամբ՝ ուղղակի ապրանքի, փողի (ոսկու), որպես ապրանքի այնպիսի ձևի, որն ունի սեփական արժեք, թղթադրամի, որը նման արժեք չունի, և մի շարք այլ վավերացված արժեթղթերի՝ անգամ բուտաֆորային (շինծու) փողերի ձևով:

Փոխանակման միջոցների նման տարատեսակությունը և շուկայի զարգացման փուլերի յուրահատկության միասնությունը դրսևորվում են հասարակության զարգացման որոշակի սոցիալ-քաղաքական պայմաններում: Օրինակ՝ ազատ շուկայական տնտեսությունը ենթադրում է զուտ կապիտալիստական պայմաններ, այնպես, ինչպես վերջինս ենթադրում է ազատ շուկայական տնտեսության պայմաններ: Էլ չենք խոսում այն մասին, որ արտադրության միջոցների բացարձակ հանրայնացման պայմաններում գործող դիրեկտիվային պլանավորումը հետամուտ է ընդհանրապես շուկայի վերացմանը:

Զուտ կապիտալիզմը ազատ մրցակցային ժամանակաշրջանի կապիտալիզմն է, որի պայմաններում ոչ ոք, ոչ մի բանով չի խանգարում գործարարությանը (բիզնեսին), և ձեռնարկատիրությունն ու առևտուրը ազատ պայմաններում են: Այդ պայմանները հնարավոր են դարձնում կապիտալի սկզբնական, ապա ինտենսիվ կուտակումը, վաշխառուական և առևտրային կապիտալի աշխուժացումը՝ հանուն շահույթի ավելացման և շուկայի զարգացման:

Ազատ շուկայի և զուտ կապիտալիզմի փոխադարձ կապի հիմքում ընկած են հինգ կարևոր տնտեսական հատկանիշներ՝

1) մասնավոր սեփականության տիրապետությունն ընդհանրապես.

2) ձեռնարկատիրական և այլընտրանքային ազատությունը.

3) անձնական շահերը՝ ազատ շուկայի գործողության գլխավոր դրդապատճառ.

4) մրցակցության և գների համակարգի ազատ կիրառումը, որը հնարավոր է դարձնում Ա. Սմիթի նշած «անտեսանելի ձեռքի» գործողության և տնտեսության կառավարման դրույթը.

5) տնտեսական գործերում կառավարության ձեռնպահությունը:

Արտաքուստ թվում է, թե ազատ շուկայի և զուտ կապիտալիզմի հիմքում ընկած այս հինգ հատկանիշները գործում են իրարից բացարձակապես անկախ, մինչդեռ դրանք երկրագնդի հինգ աշխարհամասերի նման ներքին կապեր ունեն և ընդամենը դրսևորվում են հարաբերականորեն անկախ:

Առաջին հատկանիշը, որը, ըստ կոմունիստական դասականների սխալ կարծիքի, պետք է վերածվի քաղաքական հեղափոխության, ապա ունեցվածքի բռնագրավման միջոցով իր տեղը զիջի հանրային սեփականությանը՝ իբր պատմականորեն օբյեկտիվ անհրաժեշտություն է: Մինչդեռ մասնավոր սեփականության և շուկայի ոչնչացումը կործանիչ հետևանք կունենա, անկախ այն բանից, որ սեփականության այդ ձևը հասարակությունը տրոհում է երկու գլխավոր խմբի՝ սեփականատերերի և վարձու բանվորների:

Նման փաստը սոցիալ-տնտեսական, իրավական տեսանկյունից դրսևորվում է քչերի տիրապետության և շատերի հպատակության ձևով: Ակնառու է սրանից բխող սոցիալական հակամարտության իրողությունը, սակայն չպետք է մոռանալ, որ քաղաքակրթության արդի փուլում այդ երևույթն իր բոլոր արդար և անարդար կողմերով հասարակության զարգացման համար անխուսափելի անհրաժեշտություն է:

Երկրորդ հատկանիշը՝ ձեռնարկատիրության և այլընտրանքային ազատությունը, կապիտալի ավանսավորման չափերը, դրա նպատակաուղղվածությունը, արտադրվող ապրանքների տեսակարար կշիռը, այլընտրանքային նախապատվությունը ձեռնարկատերն ինքն է որոշում: Որևէ արտաքին ազդակ, ուժ, պետական պարտադիր միջամտություն և այլ գործոն չպետք է ձեռնարկատիրոջը, առևտրականին իր կամքը և ցանկությունը թելադրի: Այստեղ մի կողմից վարձու աշխատուժի սեփականատերերն իրենք են որոշում իրենց գործունեության նպատակաուղղվածությունը, մյուս կողմից՝ վարձու աշխատուժ կրողներն են որոշում: Արտադրական և սպառողական շահերի իրականացման անհատական ինքնուրույնությունը ազատ շուկայի շարժիչն է:

Երրորդ հատկանիշը՝ անձնական շահերը, որպես ազատ շուկայի գործողության գլխավոր դրդապատճառ: Ազատ շուկայի և զուտ կապիտալիզմի պայմաններում ամեն մի անհատի կամ առանձին ֆիրմայի գլխավոր նպատակը նվազագույն ծախսերի միջոցով առավելագույն շահույթ և եկամուտ ստանալն է: Վարձու աշխատուժ կրողը ձգտում է դրան հասնել աշխատավարձի բարձրացման միջոցով, ապրանքատերերը (նյութական ռեսուրսների սեփականատերերը)՝ գների: Այս կապակցությամբ անձնական շահերը մղվում են առաջին պլան:

Չորրորդ հատկանիշը Ա. Սմիթի նշած «անտեսանելի ձեռքի» գործողությունն է տեսանելի ազատ շուկայական մրցակցությունում:

Նշված ձեռքի գործողությունը (առավել ևս ազատ շուկայում) անմիջականորեն կապված է աշխատանքի և արտադրության հասարակական բնույթի հետ, որը դրսևորվում է արտադրված ապրանք-

ների հասարակական ճանաչման (գնման) միջոցով: Եթե ազատ շուկայական մրցակցության պայմաններում դրանք ներճյուղային և միջճյուղային մրցակցության պահանջներին չհամապատասխանեն, ապա իրենց տիրոջ կամքին հակառակ՝ կվաճառվեն ցածր կամ դեմպինգային գներով:

Նման անցանկալի և անսպասելի երևույթն աննկատելիորեն կապված է այն ծախքերի հետ, որոնք, ուղղված լինելով շուկա ներմուծվող ապրանքների արտադրությանը և վաճառահանմանը, լինում են ավելին, քան ստացված շահույթը: Այստեղ շահույթը դառնում է կողմնացույց՝ առաջադրելով բարոյապես մաշված արտադրության միջոցներից կամ ազատվելու, կամ սնանկանալու երկընտրանքը: Իսկ ազատ մրցակցությունը թելադրում է միևնույն ծախքերի պայմաններում ստանալ ավելի բարձր շահույթ:

Ինչպես տեսնում ենք, շահույթի բարձր կամ ցածր լինելը շատ քիչ է կապված այն իրողության հետ, որ սպառողը ձգտում է ցածր գնով ձեռք բերել ապրանքը, իսկ վաճառողը՝ բարձր գնով վաճառել:

Հինգերորդ հատկանիշը տնտեսական բնագավառում կառավարության չմիջամտելն է:

Մասնավոր կապիտալիզմը, առավել ևս ազատ շուկայական պայմաններում, ինքնակառավարվող և ինքնակարգավորվող տնտեսական համակարգ է: Նրա առաջընթացը միջնորդավորվում է ձեռներեցների ազատ գործունեության սկզբունքով և քաղաքական իշխանության, կառավարության կամայական ցանկությունների հետ անհամատեղելի է: Կառավարության դերն այստեղ այն է, որ իրականացնի մասնավոր սեփականության գործառութային և ազատ ընտրանքային շահերի ապահովումը:

Նման պայմաններում են լուծվում մարդկությանը հայտնի երեք խոշոր տնտեսական հարցերը՝ ի՞նչ արտադրել, ի՞նչ միջոցներով և ո՞ւմ համար:

К ВОПРОСУ О ХАРАКТЕРНЫХ ПРИЗНАКАХ МИКРОЭКОНОМИКИ

(научно-методический аспект)

ТОРОСЯН К. А., ДИЛОЯН С. А.

Резюме

Экономика в целом является всеобщей сферой целенаправленной деятельности во имя удовлетворения потребностей общества. В свете сказанного ее можно изучать также по методике последовательности функционирования системы экономических отношений: производство – распределение – обмен. Изучение системы экономических отношений целесообразно начинать с тех “капилляров экономики”, которые составляют фундамент жизнедеятельности человеческого общества. И именно микро-

экономика является основой экономики всех времен и всех стран.

С возникновением и развитием рыночных отношений микроэкономический “пласт” остается в качестве “питательной среды” мезо, макро, мега-экономических отношений. Вне микроэкономических отношений невозможно представить развитие товарно-денежных отношений, возникновение свободного и любого другого типа рынков.